ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԱՌՑԵԼԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ԵՒ ԻՄԱՍՏԱԼԻՑ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մատենագիտությունը. «Էջմիածին» ամսագիր, 1970-2010: Հրատարակության պատրաստեց Տ. Արարատ քահանա Պողոսյանը. Ս. Էջմիածին, 2011:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 60-ամյակին եւ գահակալության 12-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունների եւ հրատարակությունների շրջագծում լույս է ընծայվել Վեհափառ Հայրապետի մասին «Էջմիածին» ամսագրում լույս տեսած նյութերի մատենագիտությունը: Մնայուն եւ տեւական արժեք ու նպատակադրում ունեցող նյութեր հրատարակող «Էջմիածին» ամսագիրն իր յուրաքանչյուր համարի մեջ անդրադառնում է Վեհափառ Հայրապետի գործունեությանը, հրապարակում Հայրապետին ուղղված գրությունները, տպագրում Հայրապետական սրբատառ կոնդակները կամ դրանց ցանկերը, օրհնության գրերը եւ այլն:

Ներկա Մատենագիտությունը կազմել եւ հրատարակության է պատրաստել «Էջմիածին» ամսագրի աշխատակից արժանապատիվ Տ. Արարատ քահանա Պողոսյանը (ի դեպ մատենագիտության հեղինակը կազմել եւ հրատարակության է պատրաստել նաեւ «Էջմիածին» ամսագրի 1974-2008 թվականների սրվարածավալ մատենագիտությունը):

Գրախոսվող սույն մատենագիտությունն ընդգրկում է 1970-2010 թթ. Վեհափառ Հայրապետի գործունեությանը վերաբերող նյութերը: Հիշյալ աշխատության վերաբերյալ նշենք, որ այն կազմվել է այս ժանրի համար ընդունված եւ լայն տարածում գտած նյութերի թեմատիկ դասավորության սկզբունքով: Կազմողը հիմք է ընդունել Վեհափառ Հայրապետի կյանքին եւ գործունեությանը վերաբերող նյութերի համեմատաբար առավել կարեւորություն ունեցող նյութերի հա-

ջորդական դասավորումը: Մատենագիտությունը բաղկացած է հետեւյալ միավորներից.

ա. Կազմողի կողմից,

բ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի համառոտ կենսագրականը,

գ. Մատենագիտական նկարագրություն,

դ. Բովանդակություն:

«Կազմողի կողմից» բաժնում հեղինակը ներկայացնում է աշխատանքի նախաձեռնման դրդապատճառները, կարեւորությունը, մատենագիտությունից օգտվելու կանոններն ու եղանակները: Նշենք, որ հեղինակը որոշակի օգտակար լրացումներով հանդերձ փորձել է չհեռանալ արդեն հրապարակի վրա եղած «Արարատ» եւ «Էջմիածին» ամսագրերի մատենագիտությունների կազմման եւ նկարագրման կանոններից՝ այսպիսով անտեղի չբարդացնելով օգտվողների կողմից որեւէ նյութի փնտրտուքը:

Այնուհետեւ հաջորդում է Վեհափառ Հայրապետի համառոտ կենսագրականը: Հեղինակը Վեհափառի կենսագրությունը ներկայացնելիս հետեւել է «Էջմիածին» ամսագրում ընդունված եղանակին, այսինքն՝ կենսագրականը ներկայացված է խիստ ժամանակագրական սկզբունքով, որն անկասկանդ հնարավորություն է տալիս թվականների խիստ ընդգծվածության եւ առանձնացված լինելու պատճառով անմիջապես աչքի զարնել, ինչն էլ օգտվողի համար հեշտացնում է անմիջապես գտնել Հայրապետի կյանքին վերաբերող այն թվականը, որն ինքը փնտրում է: Ընդհանրապես մատենագիտության մեջ հեղինակն առաջնորդվել է «Էջմիածին» ամսագրում ընդունված եւ ավանդույթ դարձած սկզբունքներով, որով շատ էական կապ է ստեղծվել ամսագրի եւ մատենագիտության միջեւ, ինչը նորից հօգուտ երկուսից էլ օգտվողների է: Ասվածի վառ վկայությունն է նաեւ այն, որ հեղինակը Վեհափառի կենսագրականի տվյալները հիմնականում վերցրել է «Էջմիածին» ամսագրում տարբեր առիթներով եւ տարբեր թվականներին արդեն լույս տեսած կենսագրականներից, ինչպես նաեւ Ս. Էջմիածնի հրատարակչությունում տպագրված «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» հանրագիտարանի՝ Վեհափառին վերաբերող հոդվածից:

Կենսագրությանն անմիջապես հաջորդող մատենագիտական նկարագրություններն իրենց նկարագրման եղանակով, ինչպես ասացինք, հետեւում է նույն հեղինակի «Էջմիածին» ամսագրի 1974-2008 թթ. մատենագիտության նկարագրման սկզբունքներին, ինչն էլ իր հերթին առանց էական տարբերությունների հետեւում է Սեդա Կոծինյանի որդեգրած սկզբունքներին՝ ստեղծելով կարեւորագույն կապ «Արարատ»-ից մինչեւ ներկա մատենագիտությունը: Նկարագրությունները լինելով թեմատիկ՝ ներքին դասավորվածությամբ միմյանց հաջորդում են արդեն ոչ թե այբբենական, այլ ժամանակագրական հաջորդա-

կանությամբ (իմիջայլոց այս սկզբունքն այն էական տարբերություններից մեկն է, որ առկա է սուն հրատարակության եւ նույն հեղինակի՝ «Էջմիածին» ամսագրի 1974-2008 թթ. մատենագիտության միջեւ, քանի որ վերջինիս մեջ նյութերը նկարագրվում են ըստ ժամանակագրության, իսկ արդեն թվականների (յուրաքանչյուր տարվա) ներքո առաջնորդվում են այբբենական կարգով): Նկարագրությունների մեջ նախ ներկայացված է հոդվածագրի անուն ազգանունը, ապա հոդվածի վերնագիրը, որին հաջորդում են հոդվածի՝ ամսագրում գտնվելու տվյալները. օրինակ՝

Կիրիլ Ա. Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա.-ի շնորհավորական ուղերձը Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ.-ին՝ գահակալության տասնամյակի առիթով: 2009, ԺԱ., էջ 13-14:

Ինչպես երեւում է նկարագրությունից, հոդվածագրի անուն-ազգանունը բուն նկարագրությունից առանձնանում տառատեսակի մգացմամբ (թավ), այս հնարքը նպաստում է, որպեսզի մատենագիտությունից օգտվողը արագությամբ եւ հեշտությամբ կարողանա տարբերակել իր փնտրած հեղինակի անուն-ազգանունը: Նշենք նաեւ, որ այն հոդվածները, որոնք տեղ են գտել ամսագրում առանց հեղինակի եւ չունեն «անուն-ազգանուն» նմանատիպ նկարագրություններում մգացվել են նկարագրության միայն առաջին բառերը, օրինակ՝

Հայրապետական մաղթանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 11-րդ տարեդարձի առիթով: 2010, ԺԱ., էջ 17:

Նշենք, որ առանձին դեպքերում մգացվել են նկարագրության առաջին երկու բառերը օրինակ՝

Մայր Աթոռում, Եկեղեցական բեմ. Լուրեր: 2001, Թ., էջ 125-126.

Տ. Արարատ քհն. Պողոսյանի կազմած այս մատենագիտությունն առանձնանում է նաեւ նրանով, որ նկարագրությունների վերջում, երբ արդեն նշվում է հոդվածի՝ ամսագրում գտնվելու տեղը, հեղինակը ամսագրի համարները նշող գլխագիր տառերի (*Ա-ԺԲ*) կողքին դրել է կետ (.), ինչը նշանակում է, որ տեղիներում նշվող գլխատառերը (օրինակ՝ *2003, ԺԲ., էջ 100*) պետք է ընկալել որպես թիվ (օրինակ՝ *2003, 12, էջ 100*): Մատենագիտության նկարագրությունների առանձնահատկությունն այն է, որ հեղինակը հոդվածագրի նյութը նկարագրելիս անպայմանորեն նկարագրությանն է կցում նաեւ հոդվածում առկա բոլոր ենթավերնագրերը, որոնք ընթերցողին օգնում են հեշտությամբ գաղափար կազմելու հոդվածի բովանդակության մասին: Նմանօրինակ նկարագրությունների մեջ, որպեսզի բուն նկարագրության վերնագիրն առանձնացվի ենթավերնագրերից՝ ենթավերնագրերը սկսվում են մգացված **Բվնդ.** (=բովանդակություն) սկսվածքով, դրանք ունեն ավելի փոքր տառաչափ եւ տարբերվում են առանձին տառատեսակով, օրինակ՝

Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա. Պատրիարքի այցը Հայաստան **[16-18 մարտի 2010]**: 2010, Գ., էջ 48-64:

Բվնդ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա. Պատրիարքի՝ Հայաստան այցելության առիթով: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի Հայաստան այցելության առիթով Քանաքեռի ռուսական եկեղեցում: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի Հայաստան այցելության առիթով միասնական աղոթքի ժամանակ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինի խոսքը Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Երեւանում ռուսական եկեղեցու հիմնարկեքի առիթով: Համատեղ հայտարարություն Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեւ:

Մատենագիտության առանձնահատուկ եւ յուրօրինակ սկզբունքներից է նաեւ, բացի հոդվածում եղած ենթավերնագրերի կցումը նկարագրությանը՝ հեղինակի նոր տողից սկսված ծանոթագրությունը՝ այն դեպքում, երբ հոդվածի վերնագիրը եւ ենթավերնագրերը լիովին չեն բացահայտում հոդվածի բովանդակությունը: Այս ծանոթագրությունները լրացուցիչ տեղեկություններ են տալիս հոդվածի մասին, որոնք, ինչպես ենթավերնագրերը, նույնպես օգնում են փնտրած նյութը մատենագիտության մեջ գտնելուց հետո կողմնորոշվել՝ արժե հոդվածն ամսագրում փնտրել, թե՞ ոչ: Օրինակ՝

Հայրապետական տնօրինություն: 2007, ԺԲ., էջ 5:

Կարգալույծ են արվել Տ. Հովհաննես աբղ. Մայիլյանը եւ Տ. Նորայր աբղ. Սիմոնյանը:

Մատենագիտության մեջ «Մայր Աթոռում. եկեղեցական բեմ. լուրեր (սկսած ուսանողական շրջանից» խորագիր-վերնագիրը կրող բաժինը օրագրության տեսքով ներկայացնում է Վեհափառ Հայրապետի գրեթե յուրաքանչյուր օրվա իրադարձություն՝ սկսած դեռեւս ուսանողական տարիներից: Բացի սրանից, մատենագիտության մեջ հանդիպում են նաեւ «Հովվապետական եւ պաշտոնական այցելություններ», *«Հանդիպումներ», «Դեսպաններ (ընդունելություն)», «Ընդունելություններ եւ այցելություններ (զանազանք)», «Ուխտագնացություն եւ ուխտավորների ընդունելություն»* վերտառություն ունեցող խորագրեր, որտեղ ներկայացվում են Մայր Աթոռ ժամանած հյուրերը, թեմական առաջնորդները, սփյուռքի նշանավոր գործիչներ եւ այլք:

Մատենագիտության մեջ տեղ գտած *«Կոնդակներ (անդրանիկ կոն-*

դակ, իսառը կոնդակներ, «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ», «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» եւ «Սուրբ Ներսես Շնորհալի»)», «Հայրապետական խոսք եւ կոնդակ՝ նվիրված Մեծ Եղեռնին», «Կոչեր», «Համապեղ հայրարարություններ», «Հայրապետական քարոզ», «Օրհնության խոսք», «Հայրապետական ուղերձ», «Հայրապետական պատգամ», «Օրհնության եւ գնահատականի գրեր», «Շնորհավորական գրեր», «Ողջույնի խոսք», «Հայրապետական խոսք», «Բարեմաղթություններ» խորագրերն արտացոլում են Վեհափառ Հայրապետի կաթողիկոսության տարիների իրադարձությունները՝ տարվա կամ ամսվա կտրվածքով: Վեհափառ Հայրապետի եւ այլ Եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխանակած ողջույնի հեռագրերն ու գրությունները լույս են սփռում մեր Եկեղեցու էկումենիկ կապերի վրա:

Մատենագիտության մեջ հեղինակը կարեւորելով Գերագույն Հոգեւոր Խորհրդին նվիրված հոդվածներն ու Հայրապետական զեկուցումները՝ դրանք առանձնացրել է *«Հայրապետական զեկույց Գերագույն Հոգեւոր Խորհրդի նիստերի ժամանակ»* խորագրի ներքո եւ այլն:

Հետեւաբար ամսագիրը, Վեհափառի Հայրապետի տարեգրությունը լինելով հանդերձ, նաեւ որոշ իմաստով Նրա օրագրությունն է:

Նշենք նաեւ, որ մատենագիտությունն ունի 1420 նկարագրություն, որոնք բոլորն էլ սկզբից մինչեւ վերջ աճման կարգով ստացել են համապատասխան թվահամար:

Որպես թերություն կցանկանայինք նշել, որ հեղնակը փորձելով պահել ամսագրում հոդվածների, անուն-ազգանունների եւ վերնագրերի ուղագրությունն անփոփոխ թողնելու սկզբունքը, այնուամենայնիվ առանձին դեպքերում այն խախտել է: Հաջորդ վրիպումը, որ կարող էր նաեւ չլինել այն է, որ հեղինակը մատենագիտության մեջ ներկայացնելով հոդվածի նկարագրությունը՝ երբեմն նաեւ տարբեր տառատեսակով եւ տարբեր տառաչափով ու անկյունավոր փակագծերում բերում է հոդվածում նկարագրվող իրադարձության օրը, ամիսը եւ թարեթիվը. օրինակ՝

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ բյուրոյի պատվիրակությանը [22 փետրվարի 2000]: 2000, Բ., էջ 17:

Ցանկալի կլիներ, որ մատենագիտության կազմող հեղինակը հաշվի առնելով այս լրացուցիչ տեղեկության կարեւորությունը՝ վերոնշյալ սկզբունքը հնարավորին չափ կիրառեր բոլոր նկարագրություններում: Եւ որպես գլխավոր պակասություն պիտի հորդորենք հեղինակին, որ եթե ապագայում այս մատենագիտությունը լրացվի եւ կամ վերահրատարակվի՝ անպայման մատենագիտությունն օժտի մատենագիտությունների բանալի հանդիսացող հեղինակային, անձնանունների, տեղերի եւ վանքերի ու եկեղեցիների անվանացանկերով,

որոնք վստահաբար ավելի օգտակար կլինեն մատենագիտությունից օգտվողների համար:

Ամփոփելով նշենք, որ Տ. Արարատ քահանա Պողոսյանի կազմած «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Էջմիածին» ամսագրի 1970-2010 մատենագիտությունը», որ անհատական լիակատար մատենագիտություն չէ, այլ իր մեջ ներառում է միայն «Էջմիածին» ամսագրում տպագրված նյութերը, այսքանով այն իր տեսակի մեջ լինելով միակը եւ նախորդը չունեցողը, քանզի 131 կաթողիկոսներից եւ ոչ մեկին նման աշխատանք չի նվիրվել: Վստահաբար ազգի մեծերին նվիրված նմանաբնույթ հրատարակությունների վիթխարի դերը հատկապես մեր երիտասարդության համար դաստիարակչական մեծ նշանակություն կունենա:

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պրոֆեսոր